ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) փորձաքննության և վերլուծությունների վարչության հետբուհական կրթության որակի ապահովման բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 18-4-28.2-Մ4-2) քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնելու մասին

Հիմնական գործառույթները

1. Մասնակցում է աստիճանաշնորհման և գիտական կոչումների որակավորման գործերի ուսումնասիրման և ըստ արդյունքի համապատասխան եզրակացություններ ներկայացնելու աշխատանքներին,

2. մասնակցում է գիտությունների թեկնածուներին ատենախոսությունների գիտական ղեկավար նշանակելու թույլտվության գործընթացի իրականացմանը,

3. իրականացնում է գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ստեղծման, վերակազմավորման և լուծարմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները,

4. մասնակցում է գիտական աստիճանաշնորհման համակարգի և գիտական ու գիտակրթական կադրերի որակավորման պետական չափանիշների մշակման, համապատասխան միջազգային փորձի ուսումնասիրության աշխատանքներին,

5. մասնակցում է գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգերի և չափանիշների մշակման, գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների աշխատանքի կանոնակարգի մշակման աշխատանքներին,

6. մասնակցում է ատենախոսության պաշտպանության համար անհրաժեշտ որակավորման քննությունների ծրագրերի հաստատման աշխատանքներին,

7. իրականացնում է օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերը Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերին համապատասխանեցման որակավորման գործերի ուսումնասիրման աշխատանքները,

8. իրականացնում է որակավորման մասնագիտական քննությունների հանձնաժողովների կազմերի ձևավորման աշխատանքները,

9. իրականացնում է գիտական աստիճաններ և գիտական կոչումներ շնորհող գիտական մասնագիտությունների անվանացանկի կազմման աշխատանքները:

Նշված պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն.
- հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գիտական և գիտատեխնիկական գործունեության կամ կրթության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ.
- «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Գիտական և գիտատեխնիկական

փորձաքննության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն.

- մեծ ծավալի տեղեկատվության հետ աշխատելու կարողություն, տրամաբանելու, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն, պատասխանատվության բարձր զգացում, պարտաճանաչություն.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- պաշտոնի անձնագրով սահմանված անհրաժեշտ կոմպետենցիաների տիրապետում՝
  - ✓ խնդրի լուծում,
  - ✓ հաշվետվությունների մշակում,
  - ✓ տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն,
  - ✓ բարեվարքություն,
  - ✓ տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն,
  - ✓ ժամանակի կառավարում,
  - ✓ փաստաթղթերի նախապատրաստում:

Նշված պաշտոնը զբաղեցվում է որոշակի ժամկետով՝ մինչև ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ օրենքով սահմանված հիմքի վերացումը, այդ թվում՝ վաղաժամկետ:

Աշխատավարձի չափը կազմում է 189696 (մեկ հարյուր ութսունինը հազար վեց հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ:

Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Օրբելի եղբայրների 22:

Ընտրությունը կկատարվի ներկայացված փաստաթղթերի հիման վրա, անհրաժեշտության դեպքում կանցկացվի հարցազրույց:

Դիմողները Կոմիտե (ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 703 սենյակ) պետք է ներկայացնեն հետևալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում (լրացվում է տեղում),
- անձնագիր և հանրային ծառայության համարանիշ կամ նույնականացման քարտ,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր),
- աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ,
- արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական,
- մեկ լուսանկար՝ 3x4 չափսի:

Դիմողները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 09:30-ից մինչև 12:30-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (+374 10) 21 01 40 (ներքին՝ 107) հեռախոսահամարով:

Դիմումները ներկայացնելու վերջնաժամկետն է 2024 թվականի մարտ 27-ը: